Եւ ալալիսի երգերը անհրաժեշտ են ապացուցանելու թէ ինչպէս գիւղացի երիտասարդութիւնը քաղաքացիների, գիւղական ուսուցիչների և ուրիշների հետ չփնելով փոքր ի շատէ սովորում է գրական լեզուն, և ձգտում է իւր երգերի մէջ գործածել այն, ինչպէս որ անում են և մեր աշուղները, որոնց պարզ երգերի մէջ շատ անգամ ցցում են խիստ գրաբառ բառեր։

Վերջացնելով խօսքս թողնում եմ յարգելի ընթերցողին եզրակացութիւն անելու։

ԵՐԻԱՆԴ ԼԱԼԱՑԵԱՆ։

Նոր ստացուած գրքեր

1) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑՐԻԿ.—«Հրաւիրակ երկրին աւետեաց». երկրորդ տպագրութիւն. Հրատարակութիւն եղբարց Կիւլպէնկեան. 1892 թ., Նրուսաղէմ, տպարան Առաքելական աթոռոյ սուրբ Յակոբեանց. գինն է ?։

2) РАФФИ·—„Золотой пѣтухъ“. Переводъ съ армянскаго Н. М. Кара-Мурза. Тифлисъ, 1892 г. գինն է 1 ռուբլի։

3) ՍԻՆԻՑԻՆ, Ա. Պ., ատամնաբոյժ.—«Հանրամատչելի խրատներ բերանի խոռոչի և ատամների խնամատարութեան մասին խոլերայի ժամանակ». Թարգմանեց Թիֆլ. քաղաք. բուժարանի ատամնաբոյժ Հ. Յ. Օրբելի։ Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է՝ ամեն տող ձրի։

4) ՄՈՃՈՒԵԱՆՑ, Պետրոս.—«Բանաստեղծութիւններ». Ալեքսանդրապոլ, տպ. Աբր. Մալխասեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ։

5) ՇԵՔՍՊԻՐ, Վիլլիամ.—«Մակբեթ», ողբերգութիւն հինգ արարածով. Թարգմանեց Ստ. Մալխասեանց։ Հրատ. Թիֆ. Հրատարակչ. Ընկերութեան։ Թիֆլիս, տպ. Աբոր Նազարեանի։ 1892 թ., գինն է 50 կ.։

6) ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, Յարութիւն.—«Խոլեր, վոդեվիլ մէկ արարածով (արտատպած «Ցարազ»-ից)։ Թիֆլիս, տպ. Աբոր Նազարեանի, 1892 թ., գինն է 10 կոպէկ։

7) «ԱՐԱՔՍ», գրական և գեղարուեստական պատկերազարդ հանդէս. Հրատարակիչ Ս. Գուլամիրեանց։ 1892 թ., չորրորդ տարի, Գիրք Ա. Ս. Պետերբուրգ, տպ. Լիբերմանի. գինն է 2 ռ. 50 կոպէկ։

8) ԲՐՈՌԷՐ, Ռաուլ.—«Փորձանքների (?) բժշկական». սկզբնական օգնութիւն մինչև բժշկի գալը։ Թարգմ. ֆրանսերէնից Գ. Օհանեան։ Հրատ. Թիֆլ. Հրատարակչ. Ընկերութեան № 60. Թիֆլիս, տպար. Աբոր Ց. Նազարեան, 1892 թ., գինն է 20 կոպէկ։

(Շարունակ. տես ներկայ հմարի վերջը)։